ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ ֆինանսների նախարարության եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչության փորձագետ Տաթևիկ Զաքարյանի

Ես՝ Տաթևիկ Զաքարյանս, ՀՀ ֆինանսների նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) եկամուտների քաղաքականության և վարչարարության մեթոդաբանության վարչությունում որպես փորձագետ աշխատում եմ 2024 թ. փետրվարի 7-ից (սույն թվականի փետրվարի 7-ին կնքված աշխատանքային պայմանագրի համաձայն):

Սույն թվականի փետրվարի 7-ից մինչև մայիսի 6-ը, համաձայն աշխատանքային ծրագրի, իրականացրել եմ հետևյալ աշխատանքները.

1) հարկային վարչարարության ոլորտի անհրաժեշտ ուսումնասիրությունների (այդ թվում՝ միջազգային փորձի) և վերլուծությունների իրականացում,

2) այլ մարմինների կողմից մշակված՝ հարկային վարչարարության մեթոդաբանությանը վերաբերող իրավական ակտերի և օրենքների նախագծերի ուսումնասիրությունների իրականացում և դիրքորոշումների ձևավորում, որոնցից են՝

- «Առևտրի և ծառայությունների մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» և «Վարչական իրավախախտումների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսգրքում» փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքների նախագծերը,
- «Հայաստանի Հանրապետության հարկային և մաքսային մարմինների կողմից լիազոր մարմնին օրենքով պահպանվող գաղտնիք հանդիսացող տեղեկատվության տրամադրման դեպքերը, տեղեկատվության բովանդակությունը ու տեղեկատվության տրամադրման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը,
- «Կարեն Դեմիրճյանի անվան Երևանի մետրոպոլիտեն» ՓԲԸ-ի արդիականացում» հանրային ներդրումային ծրագրի նախագիծը,
- Երևան քաղաքի տարածքում վարձով տրվող բնակարանի համար տեղական ինքնակառավարման մարմնի կողմից տեղական տուրք սահմանելու առաջարկի վերաբերյալ,
- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հուլիսի 27-ի N 904-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծ (հսկիչ գնումների ֆինանսական աղբյուրների և ձեռք բերված ու չվերադարձված

ապրանքների տնօրինման կարգ, հսկիչ գնմամբ ձեռք բերված ապրանքների վերադարձման կարգ և ժամկետներ) հարկային վարչարարության մեթոդաբանությանը վերաբերող առաջարկությունների պատրաստում (իրավական ակտերի նախագծեր, եզրակացություններ, տեղեկանքներ, այլ փաստաթղթեր), ինչպես նաև դրանց վերաբերյալ մեթոդական պարզաբանումների և ուղեցույցների մշակումը,

- «Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի սեպտեմբերի 3-ի N 1475-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Հայաստանի Հանրապետության կառավարության որոշման նախագիծը:

3) օրենսդրական փոփոխությունների վերաբերյալ համապատասխան գրությունների, տեղեկանքների պատրաստում և տրամադրում Ֆինանսների նախարարության հիմնական և աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումներին,

4) 2024 թվականի առաջին եռամսյակում հաշվետվության ներկայացնելը՝ հիմնված հարկային և մաքսային օրենսդրության մեջ կատարված այն փոփոխությունների վրա, որոնք 2024 թվականի առաջին եռամսյակի ընթացքում կարող էին ազդել պետական բյուջեի եկամուտների վրա,

5) Վարչության գործառույթներից բխող այլ ընթացիկ աշխատանքների իրականացում, մասնավորապես, տնտեսավարող սուբյեկտների և քաղաքացիների կողմից ներկայացված առաջարկությունների, բարձրացված հարցերի վերաբերյալ դիրքորոշումների ձևավորում և սահմանված կարգով դրանց ընթացքի ապահովում:

Եկամուտների քաղաքականություն և
վարչարարության մեթոդաբանության
վարչության փորձագետ՝ Տաթևիկ Զաքարյան